ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2013 թվականի N 581-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N 09-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՀՐԱԶԴԱՆԻ N12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի հունվարի 22-ի N 09-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի հունվարի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի 2013-2015 թվականների ռազմավարական և 2013 թվականի տարեկան ծրագրերը վավերացնելու մասին >> N 09- Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) N1 հավելվածում 41.2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 41.3 կետը.

<<

41.3	<<Հրազդանի N12 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ	2013	3	Համակարգի գնահատման աուդիտ

>>,

2) N 2 հավելվածում 40-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 40.1 կետը.

<<

40.1	<<Հրազդանի N12 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ	3	05.12.2013	10.12.2013	Ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և դրանց ստանդարտների կիրառելի հիմունքներին համապատասխանության գնահատում	Կոմիտաս Հունանյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	1.0

						Միավորի կողմից կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջների պահպանման և կատարված ծախսերի հիմնավորվածության գնահատում	Անահիտ Ստեփանյան	Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ	1.0
						Միավորի հաշվեկշռում գտնվող գույքի/տարածքի/ վարձավճարների հաշվարկման և գանձման գործընթացի գնահատում	Կոմիտաս Հունանյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	1.0
						Գործատուի իրավական ակտերի ՀՀ օրենսդրության համապատասխանության և ընդհանուր գործավարության ուսումնասիրություն	Էմմա Գևորգյան	Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ	1.0

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ **Կոմիտաս Հունանյանին**՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի գլխավոր մասնագետ **Անահիտ Ստեփանյանի** և իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ **Էմմա Գևորգյանի** մասնակցությամբ տալ աուդիտորական առաջադրանքի հանձնարարական՝ համակարգի գնահատման աուդիտ իրականացնելու նպատակով 2013 թվականի դեկտեմբերի 05-ին, 06-ին և 10-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի N12 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

3. Աուդիտորական խմբին՝ աուդիտորական առաջադրանքը իրականացնել 2012 և 2013 թվականների համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և դրանց ստանդարտների կիրառելի հիմունքներին համապատասխանության , կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջների պահպանման և կատարված ծախսերի հիմնավորվածության, միավորի հաշվեկշռում գտնվող գույքի/տարածքի/ վարձավճարների հաշվարկման և գանձման գործընթացի գնահատման, գործատուի իրավական ակտերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության և ընդհանուր գործավարության ուսումնասիրության նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ